

A 19.00.01
Ա - 42

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅԱՐՈՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ ՎՈԼՈՂՅԱՅԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՏԵՂ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԺԹ.-00.01 - «Հոգեբանության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2002

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության և մանկավարժության ֆակուլտետի գիտական խորհրդում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ հոգ. գիտ. դոկտոր պրոֆ. Կ.Վ. Ոսկանյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝ հոգ. գիտ. դոկտոր պրոֆ. Ս.Զ. Արզումանյան
հոգ. գիտ. թեկնածու Ս.Ֆ. Սարգսյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2002թ.-ի դեկտեմբերի 30-ին ժ.14.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 375010, Խանջյան 5:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2002թ.-ի նոյեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,

մանկավարժական գիտ. թեկնածու՝

Ս. Մ. Գրիգորյան Յ.Մ. Գրիգորյան



3802-2002

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի աշխատանքությունը Հոգեբանության տարբեր դպրոցներ մտածողության զարգացման հիմնահարցը քննարկել են «ուսուցիչ-աշակերտ» հարաբերության մեջ: Չնայած կատարված մեծ թվով հետազոտությունների այնուամենայնիվ հոգեբան հետազոտողների ուշադրությունից դուրս է մնացել «աշակերտ-աշակերտ» հարաբերության մեջ դեռահասների մտածողության ուսումնասիրության հարցը: Այսօր անձի հոգեկանի զարգացման շատ հարցեր քննարկվում և հետազոտում են համատեղ գործունեության մեջ, խոսքային հաղորդակցման պայմաններում: Համատեղ խմբային գործունեության մեջ մեկ սուբյեկտի հողորդակցման դրական ներգործությունը մեկ այլ սուբյեկտի իմացական գործընթացների վրա հոգեբանության մեջ ուսումնասիրում են 20-30 ական քվականներից սկսած: Ռուսական հոգեբանության մեջ Վ.Մ.Բեխտերևը, Վ.Ն.Մյասիշչևը, Բ.Գ.Անանևը, Լ.Ս.Վիգոտսկին առաջիններից էին, որոնք հետազոտեցին խոսքային հաղորդակցման պայմաններում մեկ անհատի փորձի դրական ներգործությունը մեկ ուրիշ անձի գործունեության արդյունքների վրա:

Ռուսաստանի Դաշնության Հանրապետության Գ.Ա. հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներ Բ.Ֆ.Լոմովը, Ն.Ն.Օբոզովը, Ա.Ն.Ելուխինան, Վ.Ա.Կուլցովան, Գ.Մ.Կուչինսկին, Տ.Ն.Մակովան և ուրիշներ իրենց կատարած ուսումնասիրությունների մեջ ցույց են տվել համատեղ խմբային գործունեության մեջ խոսքային հաղորդակցման դրական ներգործությունը խմբի մեջ ընդգրկված անձերի ընթրումների, հիշողության, մտածողության գործընթացների վրա: Արտասահմանյան հոգեբանության մեջ հիմնահարցը դիտարկել են Վ.Մյուրը, Ֆ.Ալպուրը, Ե.Սեյմանը և ուրիշներ: Ռ.Դ. մանկավարժական հոգեբանության ինստիտուտի աշխատակիցներ Ա.Ա.Բոդալյովը, Գ.Ա.Բալլը, Ա.Ի.Դոնցովան, Մ.Ի.Սիմյոնովան, Վ.Վ.Ռուբցովը և ուրիշներ իրենց ուսումնասիրությունների մեջ ցույց են տվել, որ խմբային գործունեության մեջ երեխաները ավելի լավ են ճանաչում միմյանց: Երբ դպրոցականները աշխատում են փոքր խմբերով, ապա բարձրանում է նրանց իմացական գործընթացների արդյունավետությունը: Ցածր առաջադիմություն ունեցող դպրոցականի մտածողությունը հատուցվում է բարձր առաջադիմություն ունեցող դպրոցականի մտածողության հաշվին: Սակայն մինչև այսօր չի ուսումնասիրվել այն հարցը, թե դեռահասների մտածողությունը ինչ առանձնահատկություն կունենա, եթե նրանք համատեղ խմբային գործունեության մեջ լուծեն ոչ թե ուսումնական սովորական խնդիրներ, այլ կատարեն ստեղծագործական բնույթի տարբեր առաջադրանքներ:

Մենք դեռահասներին ընդգրկել ենք չորսհոգանոց խմբի մեջ: Նրանց առաջարկել ենք լուծելու ինչպես գործնական, այնպես էլ տեսական ստեղծագործական խնդիրներ: Դիտարկել ենք, թե բարձր առաջադիմություն ունեցող դեռահասը խոսքային հաղորդակցման մեջ մտնելով ցածր առաջադիմություն ունեցող խմբի մեկ ուրիշ դեռահաս անդամի հետ, ինչպես կփոփոխի նրա մտածողական գործընթացների արդյունավետությունը: Պակաս կարևոր նշանակություն չունի նաև նշված ռեֆերենտային խմբի լիդերության հիմնահարցի հետազոտությունը սոցիալական հոգեբանության տեսակետից: Կարևոր է պարզել նաև, թե խմբի լիդերը հոգեբանական ինչ որակների հիման վրա է առաջ քաշվում մյուսների կողմից: Առաջադրված հարցերն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ արժեք: Այդ ամենով էլ պայմանավորված է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունները:

Հետազոտության հիպոթեզը. Ենթադրել ենք, որ համատեղ խմբային հաղորդակցման գործունեությունը պետք է զարգացնի սովորողների արդյունավետ և տեսական մտածողությունը: Յուրաքանչյուր դպրոցական անդամ աշխատելու է ինքնուրույն և իր մտածողությունը հարստացնելու է մյուսների մտածողության շնորհիվ: Երևան են գալու տարբեր ենթադրություններ, որոնք քննարկվելու են համատեղ, և ընդունվելու է ամենառացիոնալ որոշումը: Ցանկացած դեռահաս յուրացնելու է ընկերոջ ճիշտ պնդումը, ձեռք է բերելու նոր գիտելիքներ, տիրապետելու է գործողության իրականացման եղանակներին, նրանց մեջ մշակվելու է նոր հմտություններ: Ենթադրել ենք, որ համատեղ խմբային գործունեության ներսում ստեղծագործական խնդիր լուծելիս մեկը օգտվելու է մյուսի փորձից: Խմբի ներսում պասիվ սովորողը յուրացնելու է բարձր բանականություն ունեցող սովորողի գիտելիքները, հմտությունները, գործողությունների իրականացման եղանակները, և նրա մտածողությունը ձեռք է բերելու նոր որակ: Նրա մեջ զարգացնելու է մտքի տրամաբանականությունը, քննադատականությունը, ակտիվացնելու է նրա վարքը և այլն:

Հետազոտության նպատակն իր մեջ ընդգրկում է գիտափորձական ճանապարհով հետևյալ խնդիրների լուծումը.

1. Համատեղ խմբային գործունեության մեջ բարձրաձայն հաղորդակցման պայմաններում, դեռահասները լուծելու են ստեղծագործական հարուստ պահեր պարունակող գործնական առաջադրանքներ:
2. Համատեղ մտածելով՝ չորս հոգուց կազմված դեռահասների խումբը ինչպե՞ս կկարողանա լուծել շարժման վերաբերյալ ստեղծագործական ինքնատիպ խնդիրներ: Ի՞նչ առանձնահատկություն կունենա նրանց մտածողությունը:
3. Համատեղ գործելով դեռահասները ինչպես կկարողանան երկրաչափական բարդ պատկերից առանձնացնել պարզ պատկերները, պահպանելով դրանց տարածական դիրքը, խմբային գործունեության մեջ

ինչպես կորսնորվի նրանց տարածական պատկերացումները և մտածողությունը:

4. Նպատակ ենք ունեցել հետազոտել, թե 6-7-րդ դասարանների դեռահասները ինչպես կկարողանան համատեղ խմբային գործունեության մեջ կառուցել պարզ երկրաչափական պատկերներ: Ինչպիսի առանձնահատկություն կունենա նրանց համատեղ ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը և ենթադրություն կատարելու կարողությունը:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան 6-8-րդ դասարանների դեռահասների տեսական և տարածական մտածողության զարգացումն է, երբ նրանք համատեղ խմբային գործունեության մեջ՝ խոսքային հաղորդակցման պայմաններում, լուծել են ստեղծագործական խնդիրներ:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են 6-8-րդ դասարանների դեռահասները, երբ նրանք համատեղ մտավոր գործունեություն են իրականացրել:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ դեռահասների տեսական և տարածական մտածողությունը ուսումնասիրվել է համատեղ խմբային ստեղծագործական գործունեության մեջ՝ խոսքային հաղորդակցման պայմաններում: Սովորողներին առաջադրվել է կատարել գործնական բնույթի, շարժումների վերաբերյալ ինքնատիպ ստեղծագործական խնդիրներ, նրանց առաջադրվել է լուծել նաև երկրաչափական կառուցման խնդիրներ, երկրաչափական բարդ պատկերներից առանձնացնել պարզ պատկերներ՝ մտքում պահպանելով նրանց տարածական դիրքը: Այդ խնդիրների լուծումները դեռահասներից պահանջել է ինքնատիպ մոտեցում, ոչ միատիպ մտածողություն: Խնդիրների լուծումները պահանջում են ունենալ ստեղծագործական մոտեցում: Առաջին անգամ դեռահասներից պահանջել ենք համատեղ գործելով երկրաչափական բարդ պատկերներից առանձնացնել պարզ պատկերներ, իրականացնել բովանդակալից վերլուծություն: Երկրաչափական բարդ գծագրի ամբողջական ընկալումը և դրա ստեղծագործական վերլուծությունը մեր կողմից դիտարկվել են առաջին անգամ: Առաջին անգամ համատեղ խմբային գործունեության մեջ դիտարկվել է դեռահասների կողմից երկրաչափական պարզ պատկերների ստեղծագործական կառուցումը: Ուսումնասիրել ենք, թե համատեղ գործունեության մեջ դեռահասները միացյալ գործելով ինչպես են իրականացնում բովանդակալից վերլուծությունը, համադրումը, ընդհանրացումը, արդյոք համատեղ գործունեությունը նպաստում է խմբի դեռահաս անդամների իմացական պրոցեսների արդյունավետության բարձրացմանը: Առաջին անգամ հետազոտել ենք, թե համատեղ ստեղծագործական գործունեության մեջ դեռահասները ինչպես են իրար հետ բանավիճում, ընդունում կամ ժխտում միմյանց տեսակետները, լրացնում միմյանց մտքերը, կատարում ենթադրություններ, անում եզրակացություն: Առաջին անգամ ուսումնասիրել ենք, թե

չորսհոգանոց խմբի մեջ ինչպես է առաջ գալիս խմբի լիդերը: Խմբի անդամները լիդերության հարցում կողմնորոշվելիս իրենց ընկերոջ ինչ հատկանիշների վրա են հենվում:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը: Տեսական նշանակությունը արժեքավորվում է նրանով, որ համատեղ խմբային գործունեության մեջ դիտարկել ենք հաղորդակցման գործունեության դերը դեռահասների իմացական գործընթացների վրա: Նշված հարաբերությունը ինչպես է զարգացնում խմբի դեռահաս անդամի տեսական, տարածական մտածողությունը: Կատարված հետազոտությունը ինչ նոր փաստեր է տալիս մտածողության էությունը բացահայտելու համար:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Ատենախոսության կիրառական նշանակությունն այն է, որ ստացած արդյունքները կարելի է օգտագործել ընդհանուր սոցիալական և մանկավարժական հոգեբանության մեջ: Նյութերը հարստացնելու են մտածողության հոգեբանությունը նոր դրույթներով (հասարակական փորձի յուրացում, բանավիճային մտքի ձևավորում, քննադատական մտածողություն և այլն): Եզրակացությունները կարելի է օգտագործել մաթեմատիկայի, ֆիզիկայի, աշխարհագրության և այլ առարկաների ուսումնական նյութերի դասավանդման ժամանակ:

Աշխատության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի Խ.Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնում: Հեղինակը հետազոտության առանձին դրույթների մասին հանդես է եկել պրոֆեսորադասախոսության գիտական կոնֆերանսներում, տպագրել է հոդվածներ և այլն:

Ուսումնասիրության մեթոդները: Օգտագործել ենք անհատական խմբային, ուսուցողական, ստուգիչ, դիտման և գրույցի մեթոդները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Անհատական փորձի յուրացումը կատարվում է տարբեր ճանապարհներով, այդ թվում հաղորդակցման և համատեղ գործունեության միջոցով: Համատեղ խմբային հաղորդակցման գործունեության մեջ ոչ միայն դրսևորվում, այլև ձևավորվում է յուրաքանչյուր անհատի մտածողությունը: Ցանկացած մարդ կյանքում հանդիպում է գործնական բնույթի խնդիրների, որոնց լուծումը նրանից պահանջում է ստեղծագործել: Գործնական բնույթի խնդիրների համատեղ լուծումը ոչ միայն զարգացնելու է դեռահասների մտածողությունը, այլև նոր որակ է հաղորդելու խմբային մտածողությանը, խմբային գործունեության մեջ զարգանալու են նաև նրանց խոսքը և լեզուն, իմացական հոգեկան գործընթացները: Գիտափորձերի միջոցով պարզել ենք, թե համատեղ խմբային գործունեությունը ինչպես է զարգացնում խմբի անդամի անհատական մտածողությունը և հակառակը: Անհատ սովորողի մտածողությունը ինչպիսի ներգործություն է ունենալու խմբային մտածողության վրա:

2. Ելել ենք այն ճշմարտությունից, որ ոչ բոլոր սովորողներն են, որոնց մեջ լիարժեք ձևով կազմավորվում է ստեղծագործական մտածողությունը: Սակայն այն ինչպե՞ս է երևան գալիս խմբի ներսում: Ենթադրել ենք, որ համատեղ գործունեության մեջ շարժումների վերաբերյալ ինքնատիպ ստեղծագործական գործունեության իրականացումը հնարավորություն կտա պարզելու ոչ միայն անհատ սովորողի, այլև խմբային մտածողության առանձնահատկությունները: Գիտափորձերը թույլ կտան պարզել նաև տեսական մտածողության զարգացման ուղիները:

3. Հոգեբանության մեջ առավել կարևորվում են սովորողների տարածական պատկերացումները և տարածական մտածողության զարգացումը: Աշխատել ենք պարզել մտածողության նշված տեսակի զարգացումը, դրա առանձնահատկությունները, երբ չորսհոգանոց խմբով սովորողները երկրաչափական բարդ գծագրից առանձնացրել են պարզ պատկերներ:

4. Մտածողության զարգացումը կապված է նախագծվող, կառուցվող գործունեության իրականացման հետ: Այդպիսի գործունեություն է համարվում երկրաչափական պարզ պատկերի կառուցումը: Հետազոտել ենք այդ կառուցման ժամանակ դրսևորվող խմբային մտածողության առանձնահատկությունները:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացությունից, օգտագործվող գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 156 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի ընտրության հրատապությունը, նշված է հետազոտության վարկածը, նորույթը, նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական և կիրառական նշանակությունները, պաշտպանության ներկայացվող դրույթները և այլն:

Ատենախոսության առաջին «Համատեղ խմբային գործունեության մեջ մտածողության զարգացման հարցերի ուսումնասիրությունների վերլուծությունը» գլխում հիմնավորվում է ուսումնասիրության տեսական արժեքը, հիմնարար վերլուծության են ենթարկվում հիմնահարցի վերաբերյալ խորհրդային և արտասահմանյան հետազոտությունները:

Համատեղ գործունեության մեջ մարդիկ ներգործում են միմյանց վրա, սովորում և սովորեցնում են մեկը մյուսին: Այն պատճառակազմակերպում է մասնակիցների հետաքրքրություններով: Ռուսական հոգեբանա-

կան գրականության մեջ առաջինը Վ.Մ.Բեխտերն էր, որը գիտափորձ-նական ճանապարհով ցույց տվեց հաղորդակցման դրական ներգործությունը անձի ըմբռնումների գործընթացի վրա:

Համատեղ հաղորդակցման գործունեության մեջ Վ.Ն.Մյասիշչևը առանձնացրել է երեք կարևոր բաղադրամասեր՝ սոցիալական արտացոլումը, հուզական հարաբերությունները և վարքի եղանակների դրսևորումը: Կարևորել է նաև առանձին փորձարկվողների ստանձնած դերը և ֆունկցիաները: Դիտարկել է համատեղ գործունեության մեջ մեկ անձի հոգեբանական ներգործությունը մյուսի վրա: Նշել է, որ ներգործության ուժը կախված է նրանից, թե տվյալ անձը խմբի ներսում ինչ դիրք է գրավում:

Գ.Անանևը գտնում է, որ մարդու վարքի դրսևորումը ցանկացած մակարդակում և ցանկացած իրավիճակում իրականացվում է հետևյալ երեք փոխադարձ կապերի մեջ. ա/ մարդկային միջանձնային հարաբերությունների մասին տեղեկություններ կուտակելով, բ/ մարդու արարմունքների ինքնակարգավորումը հաղորդակցման գործընթացում և գ/ անձի ներքին աշխարհի ձևավորումը:

Բ.Ֆ.Լոնովը ցույց է տվել, որ հաղորդակցման մեջ ձևավորվում են մասնակիցների հոգեկան գործընթացները, կամքը, հույզերը, զգացմունքները և սոցիալական արժեքների մեջ կողմնորոշվելը: Հաղորդակցման մեջ յուրաքանչյուր անհատի պլանները փոփոխվում են և մշակվում է համատեղ պլան: Այդ գործընթացում զուգընկերներից յուրաքանչյուրը յուրացնում է մյուսի փորձը, հմտությունները, այլ կերպ ասած՝ նրանք սովորում և սովորեցնում են միմյանց: Մարդկանց սուբյեկտիվ աշխարհը երևան է գալիս հաղորդակցման մեջ: Այդ ընթացքում է, որ կազմավորվում են միջանձնական կապերը, բաշխվում են դերերը և դերային ֆունկցիաները: Չի կարելի հասկանալ անհատի գիտակցության զարգացումը՝ չուսումնասիրելով այդ անհատի հաղորդակցման ոլորտը, ձևը, միջոցները և եղանակները այլ մարդկանց հետ:

Լ.Ն.Օբզովը, Վ.Վ.Վեդերնիկովը, Վ.Վ.Կարոբկովը, Վ.Չ.Սազատանը, Տ.Ն.Ելուխինան ուսումնասիրել են անձի հոգեկան գործընթացների առանձնահատկությունները անհատական և համատեղ գործունեության մեջ: Պարզել են, որ համատեղ գործունեության մեջ բարձրանում է տեքստի թարգմանության որակը, ավելանում է թարգմանվող տեքստի ծավալը, ապահովվում է փոխադարձ հսկողության մակարդակը: Այդ գործընթացում կրճատվել է խնդրի լուծման վրա ծախսվող ժամանակը:

Վ.Ա.Կոլցովան հետազոտել է հասկացությունների ձևավորման գործընթացը հաղորդակցման պայմաններում: Նա առանձնացրել է հասկացության յուրացման երեք մակարդակներ՝ ցածր, միջին և բարձր: Բարձր մակարդակում սովորողների մեջ առաջացել է տեսական ընդհանրացումներ:

Գ.Մ.Կուչինսկին հետազոտել է երկխոսությունը և հանգել այն հետևության, որ հաղորդակցման և մտածողության դինամիկան, համատեղ գործունեության մեջ պահանջում են մշակել հաղորդակցման մասին

այնպիսի պատկերացում, որը թույլ կտա անցկացնել ինչպես զուգընկերների խոսքային, այնպես էլ մտածողության վերլուծություն:

Վ.Ա.Բառաբանչիկովը, Ե.Վ.Ցուկանովան, Յ.Ա.Յանուշեկը և ուրիշներ պարզել են հաղորդակցման դրական ներգործությունը մասնակիցների մտածողության գործունեության վրա և, որ բացասական հարաբերությունները իջեցնում են մտածողության արդյունավետությունը: Պարզել են մասնակիցների հույզերի արտահայտության ազդեցությունը գործընկերոջ ըմբռնումների գործընթացի վրա: Բոլորից հաջող իդեոտիֆիկացիայի (նույնականացման) են ենթարկվում այսպես կոչված հիմնական հույզերը (վախը, զարմանքը, ուրախությունը, վիշտը, զգվանքը, ատելությունը):

Մանկավարժական հոգեբանության բնագավառում որոշակի հետազոտություններ են կատարել Ա.Ա.Բողալյովը, Վ.Ս.Ազևը, Ա.Ա.Տիկովը, Վ.Վ.Անդրևսկին, Գ.Ա.Բալլը, Ա.Ի.Դոնկովան, Շ.Վ.Սարգսյանը, Գ.Մ.Կովալյովը, Վ.Վ.Ուրբովը, Մ.Ա.Սեմյոնովան և ուրիշները: Վերլուծության են ենթարկել խմբի ներսում աստիճանաբար կազմավորվող պատկերացումները, միջանձնային հարաբերությունների բովանդակության կառուցվածքը և դինամիկան:

Վերջացնելով հոգեբանական գրականության վերլուծությունը անհրաժեշտ ենք համարում նշել, որ քննարկված հետազոտությունները ուշադրություն չեն դարձրել համատեղ ստեղծագործական գործունեության մեջ դեռահասների մտածողության զարգացման հիմնահարցին, երբ հաղորդակցման պայմաններում դեռահասները կատարել են ստեղծագործական պահերով հարուստ առաջադրանքներ: Մասնավորապես մեզ հետաքրքրել է դեռահասների մտածողության առանձնահատկությունների դրսևորումը, երբ նրանք չորսհոգանոց խմբով կատարել են այնպիսի առաջադրանքներ, որոնք պարունակել են ստեղծագործական հարուստ պահեր: Գիտափորձերի ժամանակ մենք նրանց առաջարկել ենք համատեղ խմբային գործունեության մեջ կատարել գործնական բնույթի, շարժումների հետ կապված ինքնատիպ ստեղծագործական առաջադրանքներ, որոնք դպրոցական ծրագրային նյութերի մեջ չեն մտնում: Գիտափորձերի ընթացքում նրանք լուծել են երկրաչափական ստեղծագործական խնդիրներ:

Ատենախոսության երկրորդ «Դեռահասների մտածողության զարգացումը համատեղ ստեղծագործական գործունեության մեջ» գլուխը բաղկացած է երկու ենթավերնագրերից: Առաջին ենթավերնագիրը կրում է «Դեռահասների մտածողության զարգացումը գործնական բնույթի ստեղծագործական խնդիրներ լուծելիս» անվանումը: Դեռահասների մտածողության առանձնահատկությունները ուսումնասիրել ենք, երբ նրանք համատեղ լուծել են գործնական բնույթի առաջադրանքներ: Փորձերի ժամանակ առաջադրվող խնդիրների լուծումները պահանջել են ստեղծագործելու կարողություն և վերցված են կյանքից, որոնց կարող է համդիպել յուրաքանչյուր մարդ իր ամենօրյա գործունեության ընթացքում: Դեռահասները լուծել են հետևյալ տիպի խնդիրներ. «Ունեք 7

և 11 լիտր ծավալի ամաններ: Պահանջվում է 100 լիտր սպիրտի տակառից առանձնացնել 13լ սպիրտ»: Անցկացրած գիտափորձերի արդյունքներից պարզվեց, որ խմբի ընդգրկված դեռահասները ազատորեն մտել են խոսքային հաղորդակցման մեջ, օգտվել են մեկը մյուսի մտքերից, կարծիքներից, դատողություններից և արդյունքում բարձրացել է ինչպես անհատական, այնպես էլ խմբային մտածողության արդյունավետությունը: Խմբի անդամները հարցեր են տվել իրար, համատեղ քննարկել են խնդիրների տարբեր լուծումներ: Միայն թույլ տված փորձարկվողը համոզվել է իր թյուր դատողության անօգտակարության մեջ և վերափոխել է իր մտածողության ընթացքը ընկերների ճիշտ պնդումների հիման վրա: Հավասարապես ստեղծագործել են խմբի անդամ բոլոր սովորողները: Սովորողներից մեկի մեջ ստեղծագործելու շնորհքը մի քիչ ավելի է եղել, իսկ մյուսի մեջ՝ մի քիչ պակաս: Սովորողների մտածողական գործունեության համար, որպես հիմք ծառայել է պրակտիկ առարկայական գործողությունները:

Գիտափորձի արդյունքները ցույց տվեցին, որ խմբի մտածողական գործունեությունը արմատապես տարբերվում է անհատական պայմաններում իրականացվող գործողություններից և գործառնություններից: Անհատական պայմաններում իրականացվող մտածողական գործողությունների մեծ մասը կատարվում էր առանց ստուգումների, խմբի ներսում մեծ է եղել յուրաքանչյուրի պատասխանատվությունը: Խմբի յուրաքանչյուր անդամի մտածողությունը խմբի մյուս անդամների կողմից խմբագրվում, ճշգրտվում և ուղղվում էր: Նրանցից յուրաքանչյուրն իր մասնակցությունն էր բերում համատեղ գործունեությանը: Համատեղ գործունեության մեջ երևան էին հանվում լուծումների տարբեր եղանակները, նրանց շնորհիվ սովորողների մտածողությունը ձեռք էր բերում համակարգային բնույթ:

Փորձարկվողներին առաջարկել էինք լուծել նաև հետևյալ տիպի գործնական խնդիր. «8 միատեսակ ոսկյա դրամների մեջ 7-ը ունեն նույն կշիռը, իսկ մեկը կեղծ է և փոքր-ինչ թեթև: Պահանջվում է նժարավոր կշեռքով, առանց կշռաքարերի, երկու անգամ կշռելով գտնել կեղծ դրամը»: Գիտափորձերի արձանագրությունների վերլուծությունից պարզվեց, որ փորձարկվողների ունեցած նախկին գիտելիքները որևէ դեր չեն խաղում, քանի որ խնդրի լուծման բանալին ընկած է դրամները մասերի բաժանելու, խմբավորելու և դասակարգելու մեջ: Գիտափորձերից երևաց, որ քանի դեռ փորձարկվողները մտածում են լուռ, հստակ չեն գիտակցում իրենց դատողությունների ճիշտ կամ սխալ լինելը: Երբ դատողությունները արտահայտում են բարձրաձայն խոսքի միջոցով, ապա սկսվում է քննարկումը, այստեղ բախվում են տարբեր փորձարկվողների մտքերը, երևակայությունները: Քննարկման ժամանակ խմբագրվում են խմբի յուրաքանչյուր անդամի կարծիք, անկախ նրանից ճիշտ է, թե սխալ: Երբեմն որևէ սխալ միտք պատճառ էր դառնում ճիշտ դատողության կազմավորման համար: Կոլեկտիվ մտածողությունը կազմավորվում և ամրապնդվում է համատեղ ստեղծագործական գոր-

ծունեության մեջ: Յուրաքանչյուր փորձարկվող ոչ միայն պլանավորում է իր մտքերը, այլև այն համեմատում է խմբի մյուս անդամի մտքերի հետ, մերժում կամ ինչ-որ բան է վերցնում մեկ ուրիշ սովորողի մտածողությունից:

Գիտափորձերի արդյունքներից պարզվեց, որ համատեղ գործունեության մեջ կանոնավորվում են խմբի անդամների միջև եղած միջանձնային հարաբերությունները: Եթե նրանց միջև կա հոգեբանական համատեղելիություն, ապա նրանք չեն վիրավորվում, երբ խմբի որևէ անդամ մյուսի մտածողությունը համարում է սխալ և իր տեսակետն է առաջ մղում: Պարզվեց, որ խնդրի լուծման եղանակը ծագում է խնդրի պահանջի գիտակցման հիման վրա և կապված է փորձարկվողների կողմից կատարվող հարցադրումների հետ: Մտածողության ֆունկցիան չի սահմանափակվում միայն խնդրի ճիշտ լուծումով: Այն իր մեջ ընդգրկում է նաև հետազոտությունը, որը համատեղ խմբային գործունեության մեջ երևան էր գալիս արդյունավետ ձևով:

Երկրորդ գլխի երկրորդ «Դեռահասների մտածողության առանձնահատկությունները շարժումների վերաբերյալ ստեղծագործական խնդիրներ լուծելիս» ենթավերնագրի մեջ վերլուծության ենք ենթարկել շարժումների հետ կապված ինքնատիպ ստեղծագործական խնդիրների լուծումների ժամանակ երևան եկած խմբային մտածողության առանձնահատկությունները: Ստեղծագործական խնդիրները տարբերվում են ուսումնական խնդիրներից նրանով, որ սրանց մեջ ստեղծագործելու պահը շատ է:

Գիտափորձերից պարզվեց, որ թույլ առաջադիմություն ունեցող սովորողը համագործակցում է ուժեղ առաջադիմություն ունեցող սովորողի հետ, իսկ հետո ձեռք է բերում ինքնուրույնություն: Գիտափորձեր ենք անցկացրել 64 դեռահասների հետ: Նրանց բաժանել 16 տարբեր խմբերի: Յուրաքանչյուր խմբի մեջ ընդգրկել ենք միևնույն դասարանի չորս դեռահասների: Յուրաքանչյուր խմբի հետ անցկացրել ենք 10 գիտափորձեր: Ընդամենը անցկացրել ենք 160 գիտափորձ: Գիտափորձերի ժամանակ դեռահասներին առաջարկել ենք լուծել հետևյալ տիպի խնդիրներ. «Ինքնաթիռը դիմավորելու համար փոստի բաժանմունքից օդանավակայան ուղարկեցին մոտոցիկլիստին: Ինքնաթիռը տեղ հասավ սահմանված ժամանակից շուտ, որի պատճառով փոստը փոստային բաժանմունք ուղարկվեց ձիով: Կես ժամ ճանապարհ ժամկետից քանի՞ րոպե էր շուտ հասել օդանավակայան»: Ինչպես տեսնում ենք խնդրի մեջ ոչ ձիավորի, ոչ մոտոցիկլիստի արագությունների մասին ոչինչ չի ասվում, ինչպես նաև՝ տարածության: Միայն խոսվում է ժամանակի մասին:

Այս կամ այն փորձարկվողի սխալը չի հուսալքել մյուսներին: Նրանք, երբ դժվարացել են, գծել են սխեմաներ և իրենց մտածողությանը

զննական տեսք են հաղորդել: Նրանք խնդրի պահանջը գտնելու համար անհայտ մեծությունները հավաքագրում էին ճիշտ պնդումի շուրջը: Հայտնի և անհայտ մեծությունները միավորում էին մեկ ամբողջական կառուցվածքի մեջ: Եթե ձևավորվում էր ճշմարիտ միտք, ապա դա կրկնում էին մի քանի անգամ, մինչև իրենց հաջողվում էր բացել նոր կապեր և հարաբերություններ: Առաջադրանքի վերջնական լուծումը միջնորդավորված էր մի շարք միջանկյալ մտքերի և դատողությունների վերաձևակերպումներով: Միայն ուղղվում էր տեղն ու տեղը: Բարձր գիտակցություն ունեցող սովորողը համբերատար ձևով ուղղում էր մյուսների սխալները, խնդիրը բացատրում է իր բառերով: Խմբային մտածողության ժամանակ տեղի էր ունենում դատողությունների հերթափոխում: Դատողությունների հերթափոխումը, իրար հետ համեմատելը, առջնելը, տեղի էր ունենում տվյալ պահին ասած մտքերի և նախկինում ասած մտքերի համադրությամբ: Այս ամենի արդյունքում ձևավորվում էր խմբային մտածողությունը: Դեռահասների հաջորդական դատողությունները և մտքերի բառային ձևակերպումները կարելի է համարել խմբային մտածողության զարգացման ձև: Բովանդակալից վերլուծության շնորհիվ խմբի դեռահաս անդամները խնդրի մեջ նոր կապեր և հարաբերություններ էին բացահայտում: Համադրության միջոցով դրանք միավորում էին իրար: Մտածողության երկրորդ առանձնահատկությունը այն էր, որ նրա հիմքում դրվում էր պատկերային բաղադրիչը: Այս դեպքում խնդրի լուծման գործընթացը կապում էին աշխարհագրական տեղանքի հետ: Նկարում էին աշխարհագրական երեք վայրեր, որոնք գտնվում էին միևնույն ճանապարհի վրա: Հենվելով սխեմայի վրա, ամնիջապես ասում էին, որ ինքնաթիռը 40 րոպե շուտ էր վայրէջք կատարել: Ուսումնասիրությունից պարզվեց, որ այդպիսի սովորողների տարածական մտապատկերները և մտածողությունը կազմավորվել է պրակտիկ գործողությունների հիման վրա: Մեկ սովորողի դատողությունները դրական ներգործություն էր ունենում խմբի մեկ այլ անդամի մտածողության վրա և բարձրացնում խմբի մտածողության արդյունավետությունը: Այն դեռահասները, որոնք մեքենայով ճանապարհորդել էին հանրապետության տարածքով, նրանց մեջ ձևավորվել էր աշխարհագրական տարբեր միջավայրերի տարածական մտապատկերներ: Նրանք խնդիրներ լուծելիս հենվում էին այդ մտապատկերների վրա: Այսպես միջին և ցածր առաջադիմություն ունեցող տարբեր խմբերի մեջ մտցված սովորողներ մտածում էին այսպես. «Ենթադրենք փոստը Գյումրիից տեղափոխելու են Աշտարակ: Աշտարակից ուղարկված մուտոցիկլիստը ձիավորին հանդիպում է Մաստարայում: Նշանակում է ձիավորը չի անցել Մաստարա-Աշտարակ և Աշտարակ-Մաստարա ճանապարհները: Այսինքն, Մաստարա-Աշտարակ ճանապարհը կրկնակի է, որի պատճառով 20 րոպե շուտ է տեղ հասել: Նշանակում է ինքնաթիռը 40 րոպե շուտ է վայրէջք կատարել»: Այդպիսի մտածողները գծում էին մուտոցիկլիստի շարժման գծապատկերը, նրա վրա ցույց տալիս այն ճանապարհը, որը մուտոցիկլիստը անցել է և այն ճանապարհը, որը չի անցել: Խմբի մյուս դեռահաս անդամները

հասկանում էին միմյանց բացատրությունները: Խմբի ներսում սխեմաների մտավոր նախագծման և կառուցման գործընթացը իր հերթին զարգացնում էր խմբի անդամների մտածողությունը: Գծապատկերի նախագծումը նպաստում էր դեռահասների տարածական պատկերացումների և տարածական մտածողության զարգացմանը:

Դեռահասները ստեղծագործում էին մտածողության տարբեր ուղղություններով: Նրանք համատեղ գործունեության մեջ հենվում էին իրենց կողմից բացահայտված միջնորդավորված հայտնագործությունների վրա:

Երբեմն խմբի անդամների մեջ լարվածություն էր առաջանում լիդերության պատճառով, բայց արագ էլ մարում էր, երբ զնահատում էին միմյանց տեսակետները: Գիտակցական դրդապատճառների առկայությունից աստիճանաբար բարձրանում էր անհատական մտածողության մակարդակը, որն էլ իր հերթին զարգացնում էր խմբային մտածողությունը: Յուրաքանչյուր փորձարկվող առաջնությունը տալիս էր լուծման այն եղանակին, որն ինքն էր բացահայտել: Հաղորդակցման գործունեությունը նպաստում էր դեռահասների խոսքի զարգացմանը, մայրենի լեզվի նրբությունների յուրացմանը: Տրամաբանական և հիմնավորված հաղորդակցումները բարձրացնում էր դեռահասների ըմբռնումների, հիշողության և մտածողական գործունեությունների մակարդակը, բարձրանում խմբային մտածողության ստեղծագործական պահերը: Մտքերի և դատողությունների բախումների շնորհիվ կազմավորվում էին տարբեր մտածողության տեսակներ, որոնք ընկած էին խնդիրների տարբեր լուծումների հիմքում:

Ատենախոսության երրորդ «խմբային մտածողության առանձնահատկությունները պատկերային և կառուցման խնդիրներ լուծելիս» գլուխը բաղկացած է երկու ենթավերնագրերից: Առաջին «խմբային մտածողության առանձնահատկությունները պատկերային ստեղծագործական բնույթի առաջադրանքներ կատարելիս» ենթավերնագրում քննարկել ենք դեռահասների անհատական և խմբային մտածողության այն առանձնահատկությունները, երբ դեռահասները երկրաչափական բարդ պատկերից առանձնացրել են պարզ պատկերներ: Առաջադրանքը կատարելիս նրանք հենվել են տարածական պատկերացումների վրա, ըմբռնել առանձնացվելից պատկերները և դրանց տարածական դիրքերը: Նախնական փուլում սովորողները գործում էին մեկուսացված, որի պատճառով մտածողության արդյունավետությունը ցածր էր: Նրանց մեծ մասը չի տեսել և առանձնացրել մեծ թվով փոխադարձ ներթափանցված պատկերներ: Գծագրի բովանդակալից վերլուծությունը բացակայում էր: Տարբերություն էր նկատվում նաև ըմբռնումների, տարածական և արդյունավետ մտածողությունների դրսևորման մակարդակներում: Փորձարկվողները միմյանց ցույց էին տալիս պարզ պատկերներ, դրանց տարածական դիրքերը, փոխադարձ ներթափանցված լինելը: Փորձարկվողները տրված պատկերի ներսում կարևորում էին պարզ պատկերները և նրանց ներսում եղած տեղեկությունները ու ըստ դրան էլ իրական

նացնում բովանդակալից վերացարկումները: Պատկերների առանձնացման գործընթացը միևնույն ուժով և ինտենսիվությամբ երևան չէր գալիս: Ակտիվ խառնվածք ունեցող դեռահասը իր ետևից տանում էր պասիվ դեռահասին և ընդգրկում համատեղ գործունեության մեջ: Պարզվեց, որ խոսքային հաղորդակցումը բարձրացնում էր դեռահասների խմբային մտածողության արդյունավետությունը: Որքան բարձր էր բարդ պատկերի մեջ դեռահասի իրականացրած բովանդակալից վերլուծության մակարդակը, այնքան հաջողությամբ էր իրականացնում ընդհանրացման գործառնությունը: Անհատ մտածողությունը աստիճանաբար իր տեղը զիջում էր խմբային մտածողությանը: Բոլորը միասին մտածելով կարողացան բարդ պատկերից առանձնացնել որքան հնարավոր է շատ պարզ պատկերներ:

Եթե անհատական գործունեության միջոցով որևէ դեռահասի չէր հաջողվում առանձնացնել եղած պարզ պատկերների կեսը, ապա համատեղ գործունեության մեջ նրանց հաջողվում էր առանձնացնել եղած պատկերների 72%-ը: Խոսքային հաղորդակցման գործունեությունը օգնում էր փորձարկվողներին բացելու պարզ պատկերների տարածական հարաբերությունները: Պարզ պատկերները առանձնացնելիս խմբային մտածողության համար հենարան էր բարդ պատկերի կամ կողմը, կամ անկյունագիծը, կամ անկյունագծերի հատումներից առաջացած ընդհանուր գազաթը և այլն: Նրանց պերցեպտիվ գործողությունները խմաստ և նշանակություն էին ձեռք բերում, երբ դրանք հիմնավորվում էին խոսքային գործունեության միջոցով: Խոսքը դառնում էր միջոց արդյունավետ և տեսական մտածողության կազմավորման համար: Գիտափորձերի արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ անհատ փորձարկվողի մեջ երևան եկող մտքերն ու դատողությունները չունեն համապիտանի բնույթ, դրանք ընդհանրացված բնույթ են ձեռք բերում, երբ մտցվում են համատեղ խմբային գործունեության մեջ: Երբ ընդհանուր տարրի վրա չէին հենվում, ապա թույլ էին տալիս սխալներ և իջնում էր համատեղ մտածողության արդյունավետությունը: Համատեղ գործունեության մեջ դեռահասների գիտելիքները, ընդունակությունները, հմտությունները միջոց էին ծառայում ընդհանուր մտածողության զարգացման համար: Տարածական մտածողության կազմավորման գործընթացում պատկերների առանձնացման չափանիշը խոսքային հաղորդակցումն էր: Խմբի անդամների խոսքային ներգործությունը միմյանց վրա տեղի էր ունենում տարբեր ճանապարհով:

1. Ընկերոջ դատողության նկատմամբ քննադատական վերաբերմունք հանդես բերելն է: Երբ խմբի անդամը ինքնուրույն է, ապա մեխանիկորեն չի ընդունում խմբի որևէ անդամի դատողությունները: Ամեն մի պնդում անցկացնում է իր գիտակցության պրիզմայով, ապա նոր ընդունում:
2. Մյուս դատողությունները մեխանիկորեն ընդունելն է: Չկա քննադատական մոտեցում: Այսպիսի փորձարկվողը չունի ինքնուրույն և արդյունավետ մտածողություն:

3. Ընդունում է ուրիշի մտքերը և այն զարգացնում: Վերցնում է այնպիսի տեղեկություններ, որոնք ինքը չէր կարող բացահայտել: Ընդունելով ընկերոջ կարծիքը, կարողանում է վերակառուցել իր մտքերը, առաջադրանքը կատարելու ձևերն ու մեթոդները:

Երրորդ զվխի երկրորդ ենթավերնագրում, որը կրում է «Դեռահասների մտածողության առանձնահատկությունները երկրաչափական կառուցումների ժամանակ» վերնագիրը, վերլուծության ենթ ենթարկում այն գիտափորձերի արդյունքները, որոնք անցկացրել ենք 7-8-րդ դասարանների դեռահասների հետ: 64 դեռահասների բաժանել ենք 16 խմբերի: Յուրաքանչյուր խմբի հետ անցկացրել ենք 8 գիտափորձ՝ ընդամենը 128 գիտափորձ: Ուսումնասիրել ենք դեռահասների խմբային մտածողության առանձնահատկությունները, երբ նրանք նախապես տրված տվյալներով կառուցել են պարզ երկրաչափական պատկերներ: Երկրաչափական պատկերների կառուցումը ստեղծագործական գործունեություն է և բոլորովին չի ուսումնասիրված հոգեբանության մեջ: Գիտափորձերի ժամանակ առաջարկել ենք լուծելու հետևյալ տիպի խնդիրներ. «Կառուցել զուգահեռագիծ, եթե հայտնի է, որ նրա կից կողմերը հավասար են 4սմ և 5սմ-ի, անկյունագիծը 7սմ»: Գիտափորձերի վերլուծությունը ցույց տվեց, որ համատեղ մտածողությունը և գործողությունների իրականացումը կազմավորվում էր բոլոր չորս փորձարկվողների կարծիքների հիման վրա: Այլ կերպ ասած, խմբի ցանկացած անդամի կարծիք դրվում էր գործածության մեջ, մտածողության բոլոր տեսակներն էլ շաղկապված էին հանդես գալիս: Պարզվեց, որ սովորողների մեջ կազմավորվող հաղորդակցումը ուներ տարբեր առանձնահատկություններ: Այս փաստը մենք նկատեցինք նաև նախորդ գիտափորձերում, բայց ընդհանրացնում ենք այս ենթավերնագրի նյութերը ամփոփելիս:

Առաջին առանձնահատկությունը կապված էր ստացված տեղեկությունների բնույթի հետ, գիտափորձին մասնակցող դեռահասի մտածողությունը անհրաժեշտ ակտիվությամբ չի դրսևորվում, դեռահասը չի կարող բացել անհրաժեշտ գործողությունները և իրականացնել դրանք: Անհրաժեշտ տեղեկությունները խմբի անդամը ստանում է մեկ ուրիշից: Ակտիվ սովորողի բարձրաձայն մտքերը կարծես թե ամփոփում է մյուս սովորողի մտքերը: Խմբային հաղորդակցումը դառնում է դրդապատճառ խմբային մտածողության զարգացման համար:

Երկրորդ առանձնահատկությունը այն է, որ դեռահասները հաղորդակցման մեջ են մտնում պատկերի կառուցման հիմքում ընկած գործողությունները բացահայտելու համար: Հաղորդակցման շնորհիվ փորձարկվողների մեջ ձևավորվում է մոդելավորման գործողությունը: Փորձարկվողների համատեղ ջանքերով վերարտադրվում են գիտելիքները և գործողությունների իրականացման եղանակները: Գիտելիքի վերարտադրությունն իր ետևից առաջ է բերում գործողության վերարտադրություն և փորձարկվողների մտածողության մեջ ակտիվացնում է պատկերային մտածողությունը, բաղադրիչի ֆունկցիան և դեռահասի

գիտակցության մեջ առաջ է բերում բառի և պատկերի փոխներգործություն:

Հաղորդակցման երրորդ առանձնահատկությունն այն է, որ փորձարկվողների գիտակցության մեջ դրվում են գիտելիքի և գործողության ոչ միայն վերարտադրման, այլև ճշգրտման և փոխներգործության հարցերը: Անհատական մտածողության զարգացումը իր ետևից առաջ է բերում խմբային մտածողության զարգացում և հակառակը: Անհատական և խմբային մտածողությունների փոխներգործության մեջ էին մտնում: Յուրաքանչյուր դեռահաս իր ավանդն էր դնում խմբային մտածողության զարգացման մեջ:

Չորրորդ առանձնահատկությունն այն է, որ խմբային գործունեության մեջ երկխոսությունը վերածվում է մենախոսության: Այս առանձնահատկությունը երևան է գալիս, երբ փորձարկվողների միջև կա մտածողության զարգացման մեծ տարբերություններ: Հոգեկանի զարգացման բարձր մակարդակ ունեցող դեռահասը լիդերությունը վերցնում է իր ձեռքը և մտածում է բարձրաձայն: Հարցեր է առաջադրում, պատասխանում է, մի խոսքով՝ խմբային հաղորդակցումը ինքն է կազմակերպում, այդ պատճառով էլ երկխոսությունը վերածվում է մենախոսության:

Հաղորդակցման հինգերորդ առանձնահատկությունն այն է, որ հաղորդակցումը վերածվում է հարց ու պատասխանի: Խումբը չունի ընդգծված լիդեր: Նրանք ունեն հոգեկանի զարգացման միջին մակարդակ: Մտածողության խթանման միակ միջոցը հարց ու պատասխանն է: Փորձարկվողները հարց ու պատասխանի միջոցով ակտիվացնում են անհրաժեշտ գիտելիքները, օգտվում միմյանց մտքերից ու դատողություններից:

Վեցերորդ առանձնահատկությունը կապված է փորձարկվողների կարծիքների ընդունման և մերժման հետ: Մտածելով համատեղ, խմբի անդամները համաձայնում են միմյանց կարծիքներին կամ մերժում են: Կազմավորվում է «համաձայն են», «համաձայն չեն» խոսքային հաղորդակցման հարաբերությունը: Տեղի է ունենում կարծիքների բախում, որն էլ ձևավորում է խմբային մտածողությունը, բանավեճը շարունակում է այնքան ժամանակ, քանի դեռ փորձարկվողների մեջ, խնդրի լուծման վերաբերյալ չի ձևավորվել ընդհանուր կարծիք: Չորս փորձարկվողներից կազմված խումբը, որպես սոցիալական մի փոքրիկ միավոր, համատեղ խոսքային գործունեության մեջ լուծում է որևէ առաջադրանք: Նրանց կարծիքները բախվելով, ճիշտ ուղի են նշում առաջադրանքի կատարման համար: Հաղորդակցումը երևան էր գալիս, որպես սոցիալական ներգործություն և ուղղվում էր համատեղ և անհատական մտածողության զարգացմանը: Փորձարկվողների գիտակցության մեջ սահուն ձևով փոխներգործության մեջ էին մտնում մտածողության բառային և պատկերային բաղադրիչները:

Կատարված գիտափորձերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Խմբային մտածողության վերլուծությունից պարզվեց, որ համատեղ գործունեության մեջ գործնական ստեղծագործական բնույթի խնդիրներ լուծելիս հավասարապես ստեղծագործում են խմբի մեջ ընդգրկված բոլոր դեռահասները: Ինքնուրույն մտածողությունը և ընկերոջը զուգահեռաբար լսելը իր մեջ պարունակում է հսկողություն:
2. Փորձարկվողների մտածողության գործընթացից պարզ դարձավ, որ դեռահասների գիտակցության մեջ գործում է եզակիի և ընդհանուրի դիալեկտիկան: Մասերի և ամբողջի միջև կազմավորվում է որոշակի հարաբերություն: Գիտակցվում են ոչ միայն մասի, այլև ամբողջի ֆունկցիան: Առաջադրանքը կատարելիս բոլոր փորձարկվողներն էլ գտնվում էին որոնումների մեջ: Յուրաքանչյուր փորձարկվողի անհատական մտածողությունը հարստացնում էր խմբային մտածողությունը: Դրա հետ միասին խմբային մտածողության հաշվին անհատական մտածողությունը նոր որակ էր ձեռք բերում:
3. Գիտափորձերից պարզվեց, որ համատեղ մտածողության մեջ շատ է կարևորվում հարցեր դնելու կարողությունը: Հարցեր դնելը համարվում է արդյունավետ մտածողության առաջացման նախադրյալ: Հարցեր դնելով հավասարապես զարգանում է յուրաքանչյուր մասնակցի տեսական մտածողությունը:
4. Հետազոտություններից պարզ դարձավ, որ կոլեկտիվ մտածողության հիմքում ընկած է ամբողջական կազմավորում: Փորձարկվողները մեկ միասնական կազմավորման մեջ հավաքագրում էին հայտնի և անհայտ մեծությունները: Առաջադրանքի կատարման ողջ ընթացքը հանգեցվում էր խնդրի տված մեծությունների, բաքնված կապերի ու հարաբերությունների բացահայտման և դրանք մեկ միասնական մտածողական գործընթացի մեջ ընդգրկելուն:
5. Փորձերից պարզվեց, որ առաջադրանքի վերջնական լուծումը միջնորդավորված է տարբեր մտքերի ու դատողությունների վերաձևակերպումներով: Վերաձևակերպումները ու դրանց վերարտադրությունը համարվում է խնդրի լուծման գործընթացի որոշակի աստիճան և մտածողության որոշակի մակարդակ: Վերաձևակերպումները կարելի է դիտել, որպես սովորողների մեջ երևան եկող միջանկյալ «հայտնագործություններ»: Սովորողների նախնական մտքերն ու դատողությունները նախադրյալ էին ծառայում հաջորդ մտքերի և դատողությունների կազմավորման համար: Յուրաքանչյուր սովորողի միտք, դատողություն, ենթադրություն ունեն իրենց զարգացման դիմամիկան: Դրանց անցումները մեկից մյուսին առաջ են բերում դեռահասի մեջ մտածողության փոփոխություններ:
6. Փորձերին մասնակցող դեռահասների թույլ տված սխալները ուղղվում էին մեկ ուրիշ դեռահասի կողմից: Սխալների ուղղումը ճիշտ հունի մեջ էր դնում դեռահասի մտածողությունը: Խմբային մտածողությունը կազմավորվում էր դեռահասի ճիշտ մտքերի, դատողությունների, ենթադրությունների շնորհիվ: Խմբային մտածողության հիմքում ընկած են բառային ընդհանրացումները:

7. Խմբային գործունեության մեջ դրսևորվող սովորողների մտածողության առանձնահատկություններից մեկը նրա պատկերային արտահայտության ձևն է: Կային դեռահասներ, որոնց մեջ լավ էր զարգացած մտածողության պատկերային բաղադրիչը, տարածական պատկերացումներ: Գծապատկերները կառուցում էին աշխարհագրական տեղանքից ելնելով: Պատկերային մտածողության երևան գալը դրական ներգործություն էր ունենում խմբի մեջ ընդգրկված դեռահասների մտածողության վրա և նրանց մեջ նույնպես զարգացնում էր տարածական մտածողություն: Գծապատկերների կառուցումը նպաստում էր տարածական մտածողության զարգացմանը:
8. Հաղորդակցումը զարգացրեց դեռահասների մեջ բովանդակալից վերլուծության, համադրման, ընդհանրացման և վերացական մտավոր գործունեությունների հերթափոխումների անսխալ երևան գալու գործընթաց: Բացահայտված կապերը ամրապնդում էին համապատասխան բառերով և դարձվածքներով: Եիշտ գիտելիքների օգտագործումը բարձրացնում էր խմբային մտածողության արդյունավետության մակարդակը:
9. Պերցեպտիվ գործողությունների միջոցով պատկերային տեղեկությունները վերածվում էին բառային: Հաղորդակցման միջոցով բացահայտված տեղեկությունները խմբագրվում և ընդունվում էին, որպես հավաստի: Հաղորդակցումը բարձրացնում էր դեռահասների խմբային մտածողության արդյունավետությունը, զարգացնում այն: Փաստորեն պատկերային տեղեկությունները ամրակայվում էին բառերի միջոցով: Փորձարկվողները երկրաչափական բարդ պատկերի մեջ տեսնում էին պարզ պատկերների տարածական դիրքերը և բացահայտում դրանց միացնող տրամաբանական կապերը: Որքան բարձր էր բարդ պատկերի իմաստալից վերլուծությունը, այնքան հեշտ էին առաջանում տեսական ընդհանրացումները: Փորձարկվողների մեջ մշակվում էր վերլուծության և ընդհանրացման համապիտանի հնարներ:
10. Խմբի անդամների ներգործությունը միմյանց վրա տեղի էր ունենում երեք ճանապարհով: Առաջինը ընկերոջ դատողությունների նկատմամբ քննադատական մոտեցում հանդես բերելն է: Երկրորդ ճանապարհը մեխանիկորեն ընդունելն է: Երրորդ ճանապարհը ծանր ու թեթև անելուց հետո այն ընդունելն է:
11. Համատեղ խմբային գործունեության մեջ կազմավորվող մտածողության արդյունավետության և խոսքային հաղորդակցման միջև գոյություն ունի ուղիղ գծային կախվածություն: Ինչ հաջողությամբ, որ կազմավորվում է հաղորդակցման գործընթացը, ճիշտ նույն հաջողությամբ առանձնացվում և կառուցվում են երկրաչափական պարզ պատկերները: Պատկերների առանձնացման և կառուցման հիմնավորումը իրականացվում է խոսքային հաղորդակցման միջոցով:

12. Խմբային գործունեության մեջ կարևորվում է խմբի անդամների միջև կազմավորվող միջանձնային հարաբերությունները: Եթե նրանց միջև կա հոգեբանական համատեղելիություն, ապա նրանք իրար հարգում են, լիդերին առաջ են քաշում համատեղ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հետևյալ հրատարակված աշխատանքներում:

1. Դպրոցականների մտածողության զարգացումը համատեղ ստեղծագործական գործունեության մեջ: Հոգեբանության ամբիոնի գիտական աշխատությունների ժողովածու, N1: Երևան, «Մտածողություն և վարք», «Զանգակ» 2001, էջ 43-62:
2. Դեռահասների մտածողության առանձնահատկությունները շարժումների վերաբերյալ ստեղծագործական խնդիրներ լուծելիս: «Խ.Աբովյանի անվան ՀԳՄԳ-ի գիտական աշխատանքների ժողովածու», հատոր I, Երևան, «Մանկավարժ» հրատարակչություն, 2002թ. էջ 139-146:
3. Դեռահասների մտածողության առանձնահատկությունները երկրաչափական կառուցումների ժամանակ: «Խ.Աբովյանի անվան ՀԳՄԳ-ի գիտական աշխատանքների ժողովածու, հատոր I, Երևան, «Մանկավարժ հրատարակչություն», 2002թ. էջ 171-192:

АГАРОНЯН КНАРИК ВЛАДИМИРОВНА

РАЗВИТИЕ МЫШЛЕНИЯ УЧАЩЕГОСЯ В ПРОЦЕССЕ
СОВМЕСТНОЙ ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01. Теория и история психологии.

Защита диссертации состоится 30 декабря 2002г в 14.00 на заседании специализированного совета 020 при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Отношение "учитель-ученик" рассматривается разными психологическими направлениями, в частности, затрагивающими проблему развития мышления школьника. Но вместе с тем в этих исследованиях почти не обращалось внимания отношении "ученик-ученик".

В нашей работе мы поставили перед собой цель изучить мышление подростков при решении ими творческих задач. Учащиеся задачи решали группами, в каждую из которых входило по четыре подростка. При этом нас интересовало также, как воздействует мышление подростка, имеющего высокий умственный коэффициент, на мышление тех подростков, которые значительно отстают в этом параметре мышления. Одновременно с этим мы исследовали, на основе каких психологических особенностей выдвигается лидер внутри референтных групп.

Рассматриваемые вопросы, на наш взгляд, имеют важное научно-теоретическое и прикладное значение, которым и обусловлено актуальность диссертационного исследования.

Гипотеза исследования. В процессе совместного группового общения повышается эффективность мышления отдельного члена группы. Работая совместно, у учащегося мышление обогащается посредством воздействия мышления другого члена группы. При этом высказываются разные предположения, повышающие эффективность умственного коэффициента каждого подростка. Вместе с вышеуказанным предполагалось также, что в процессе совместного общения каждый член группы пользуется опытом другого члена той же группы, а внутри группы, как мы полагали, развивается мышление пассивных учащихся.

Цель исследования. Изучение мышления подростков в процессе решения творческих задач на движение; дифференцирование простых геометрических фигур от более сложных; построение геометрических фигур.

Научная новизна. Впервые делается попытка рассматривать пространственно-теоретическое мышление подростка в процессе его совместной групповой деятельности в условиях общения.

Теоретико-практическое значение. В работе рассматривается роль и функции общения подростков, формирующего познавательную и умственную их деятельность.

Практическое значение работы. Данные, полученные в исследовании, проливают свет на теорию мышления, обогащают ее границы изучения; положения, выносимые на защиту, могут использоваться в процессе учебной деятельности.



